

ՆՄՈՒՇ

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍԻՏ

1. ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ինչպես են անցկացվում Ազգային Ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները.

- 1) ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ,
- 2) ընդհանուր, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ,
- 3) ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա,
- 4) հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(Ճիշտ պատասխանն է՝ 1) ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ)

2. Հայաստանի Հանրապետությունում ինչի՞ վրա է հիմնված սոցիալական շուկայական տնտեսությունը.

- 1) պետական սեփականության վրա,
- 2) մասնավոր սեփականության վրա,
- 3) պետական ու համայնքային սեփականության վրա,
- 4) պետական և մասնավոր սեփականության վրա:

(Ճիշտ պատասխանն է՝ 2) մասնավոր սեփականության վրա)

3. Նշվածներից ո՞րը չէ նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողություն.

- 1) քաղաքացու ողջ լինելու փաստի հաստատում,
- 2) քաղաքացու որոշակի վայրում գտնվելու փաստի հաստատում,
- 3) անձանց ազգակցական հարաբերությունների փաստի հաստատում,
- 4) լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնության փաստի հաստատում:

(Ճիշտ պատասխանն է՝ 3) անձանց ազգակցական հարաբերությունների փաստի հաստատում)

4. Արդյոք նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման ստուգում չհանձնած անձինք կարող են նշանակվել նոտարի պաշտոնում.

1) նման դեպք սահմանված չէ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում: Որակավորման քննություն չհանձնած անձինք չեն կարող նշանակվել նոտար,

2) նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննության չհանձնած անձինք կարող են նշանակվել նոտար, եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառում մասնագիտական ոչ պակաս, քան հինգ տարվա աշխատանքային գործունեություն,

3) նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննության չհանձնած անձինք կարող են նշանակվել նոտար, եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառում մասնագիտական ոչ պակաս, քան երեք տարվա աշխատանքային գործունեություն,

4) նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննության չհանձնած անձինք կարող են նշանակվել նոտար, եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է ոչ պակաս, քան հինգ տարվա աշխատանքային գործունեություն:

(Ճիշտ պատասխանն է՝ 3) նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննության չհանձնած անձինք կարող են նշանակվել նոտար, եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառում մասնագիտական ոչ պակաս, քան երեք տարվա աշխատանքային գործունեություն)

5. Նշված պնդումներից ո՞րը չի համապատասխանում ՀՀ արդարադատության նախարարի 2002 թվականի մարտի 1-ի «Նոտարական գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 103 հրամանին.

1) ցանկացած հարցով նոտարը պարտավոր է կազմել փաստաթուղթ,

2) փաստաթուղթ չի ստեղծվում այն հարցերով, որոնց լուծումը հնարավոր է օպերատիվ կարգով,

3) փաստաթուղթ չի ստեղծվում այն հարցերով, որոնց լուծումը հնարավոր է անձնական հանդիպումների միջոցով,

4) փաստաթուղթ չի ստեղծվում այն հարցերով, որոնց լուծումը հնարավոր է հեռախոսային խոսակցության միջոցով:

(Ճիշտ պատասխանն է՝ 1) ցանկացած հարցով նոտարը պարտավոր է կազմել փաստաթուղթ)

6. Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով.

- 1) վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը վարձակալության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված անձից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը,
- 2) վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի տնօրինմանը, տիրապետմանը և օգտագործմանը,
- 3) վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը վարձակալության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված անձից և վճարի դիմաց հանձնել վարձակալի տնօրինմանը,
- 4) վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը:

(Ճիշտ պատասխանն է՝ 4) վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը)

7. Հրպարտության կամ վիրավորանքի դեպքում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի չի առնում.

- 1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը,
- 2) վիրավորանքի կամ զրպարտության տարածման շրջանակը,
- 3) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը,
- 4) վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասի չափը:

(Ճիշտ պատասխանն է՝ 4) վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասի չափը)

8. Նշվածներից ո՞րը ենթակա չէ գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն.

- 1) հիփոթեքի ծագման, դադարման և փոփոխման պետական գրանցումը,
- 2) սերվիտուտի ծագման, դադարման և փոփոխման պետական գրանցումը,
- 3) հողամասի կառուցապատման իրավունքի ծագման, դադարման և փոփոխման գրանցումը,
- 4) շարժական գույքի լիզինգի պայմանագրով վարձակալության պայմանագրի ծագման, դադարման և փոփոխման գրանցումը:

(Ճիշտ պատասխանն է՝ 4) շարժական գույքի լիզինգի պայմանագրով վարձակալության պայմանագրի ծագման, դադարման և փոփոխման գրանցումը)

9. Ո՞վ է պատասխանատվություն կրում լրիվ գործունակ ճանաչված անչափահասի պարտավորությունների համար.

- 1) ծնողները, որդեգրողները և հոգաբարձուները,
- 2) ծնողները, որդեգրողները և հոգաբարձուները, եթե չեն ապացուցում, որ պարտավորությունները իրենց մեղքով չեն խախտվել,
- 3) անչափահասը,
- 4) անչափահասը, եթե ապացուցում է, որ պարտավորությունները ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի մեղքով են խախտվել:

(Ճիշտ պատասխանն է՝ 3) անչափահասը)

10. Նշվածներից որո՞նք չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ.

- 1) պետական պարգևները և շքանշանները,
- 2) շրջանառության մեջ հատուկ թույլտվությամբ գտնվող գույքը (զենք և այլն),
- 3) հուշանշանների և այլ նշանների հավաքածուները,
- 4) կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքը:

(Ճիշտ պատասխանն է՝ 1) պետական պարգևները և շքանշանները)